Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՎՏԱՐԱՆԴԻ

ՎԻՏՕՇԻ ԲԱԶԷՆ

ԺԸՆԵՎ 1906

891.99
Ղ-28

Шведчик

ИФ-ис № 218-40

NOV 2011

Վ. ՏԱՐԱՆԴԻ



ՎԻՏՕՇԻ ԲԱԶԷՆ

Դինի եւ երկաթ եմ ուզում,
Երկաթը՝ Բոնապարտներին կոտրանելու,
Դինին՝ նրանց յուղարկաւորութիւն տանելու...

ԿԱՐԴՈՒՉՔԻ

Հրատ.
„ԴՐՕՇԱԿԻ"

ԺԸՆԵՎ.
1906

391.99
Ղ-28

891.99
9-28
Հայր. Ա. Արաքելեան
Հ. Ա. Արաքելեան
Амбарцумъ А. Аракелянъ
15586
(Արամ Զուարզ)
3975

ՎԱՏԱՐԱՆԴԻ

ՎԻՏՕՇԻ ԲԱԶԷՆ

Դինի եւ երկաթ եմ ուզում,
Երկաթը՝ բռնակալներին կործանելու,
Դինին՝ նրանց յուզարկաւորումը տօնելու...
ԿԱՐԴՈՒՉՉԻ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՄԵՍՔԻՆԻԱՆԻ ԱՆՎԱՆ

ՏՊԱՐԱՆ

ԺԸՆԵՎ
1906

16 JUL 2013
98755
4145

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԵՒ ԷԴՒԱՐԴԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Դուն էիր մինչեւ երէկ մեզի ճեռ,
Մեր Բայլին, Անկիան, Յաղթութեան նշանիչ,
Մեր մէ՛ջն ես ապրում Դու սուրանից յետ,
Մեր խօսքին, բազկին ու նպատակին մէջ...

1599-91 [79-90]

ՎԻՏՕՇԻ ԲԱԶԷՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Դարերից ի վեր սև՛ սուգ է պատել,
Սև՛ սուգ է պատել Հայրենի երկրին,
Եւ հաղարգելխեան վիշապի նման
Ձգել է հողի ցաւատանջ սրտին
Ու կատաղօրէն արիւնն է ծծում...
Եւ այն վայրերում վա՜ղ ժամանակից
Լսել են թրոչունք, ծաղկունք չեն ծաղկում,
Ո՞րք հովիտներում, մոխի՛ր դաշտերում
Փշերի վերան հողմերն են վայում...
Եւ կակաչն ու լաց յուսահատ Հային
Սահմանից սահման հընչելով անդուլ,
Անվերջ բողոք են անում երկընքին,
Իսկ նա շիրմի պէս լուռ է և ամուլ...
Գիշերը լի է ահ ու սարսափով,
Ոճիրն անպատիժ իր հունձքն է անում,

Պայծառ արևն էլ կո՞ր այրիի պէս
Խաւարած անցնում հայոց երկընքով...
Իսկ ժայռուտ լեռներն՝ անմրռունչ վրկայ
Մեր անցեալ փառքին, ինչպէս շըղթայած
Հըսկաների մի կուռ բանակ անդէն
Նայում են անդոր՝ Մայր-Հողով անցնող
Բարբարոսութեան ահռելի վազքին,
Եւ չը տեսնելու համար՝ մըշտական
Մըշուշով իրանց աչքերն են ծածկում...

Հէնց այն օրւանից, երբ հայ շըրթունքներ
Աղատագրութեան քարոզն հընչեցրին
Տըգէտ խուժանի ականջներին խուլ,
Իբրև պատասխան լայն լայն բացւեցին
Բանտի ու շերմի երախներն անյագ...
Եւ ամբողջ երկրում լաց ու կոծի հետ
Ըսկըսեց լըսւիլ ողբը բահերի,
Իսկ հողը գըրկող ճամբաները մութ
Ցեղին արիւնով վերջալոյսեցին...
Սրգաւեր եղան դաշտերը բերրի,
Քաղաքներն անշէն, գիւղերը կործան,
Եւ ո՛ւր որ հայ կար, որբ հայն էր ապրում,
Ա՜խ, այն վայրերը հողից դուրս փորւած
Գերեզմանների հաւասարւեցին...
Չը մընաց մի թիզ հող ամբողջ երկրում,
Որ հայի արեամբ ներկւած չը լինէր,
Ինչպէս երկընքում ո՛չ մի գիշատիչ,
Որ հայ դիակի կըտուց չը զարնէր...
Եւ հայը տանջւած, հայը չարչարւած,
Հայը մորթըւող, հայը խաչ հանւող

Յուսահատութեան մի ճիչ արձակեց...
Մի ճիչ ահռելի և աղիողորմ,
Որից դահիճներն իսկ սարսըռացին,
Բայց անարձագանք նա թըռա՜ւ կորաւ,
Գընաց խառնըւիլ այն բիւր ճիչերին,
Որ անմեղ զոհերն ամեն հասակի՝
Ջէնքի, մահակի տակ մեռած ժամին
Իբրև հուր անէծք Արարչին թողին,
Եւ որ թանձրացած տըրտմութիւն ինչպէս
Մեր ձորն ու հովիտ դագաղ ընտրեցին...



ՎՐԷԺ

—

Բայց այսքան արիւն, աւեր ու արցունք
Թ'Երկինք ու Ազգեր թողին որ նիւթէր
Մի ցեղի հանդէպ, որի յանցանքն էր
Ազատագրութեան ջահերը վառել,
Հայ տղերք սակայն չը հանդուրժեցին
Կեանքի ու պատւի սրբապղծութեան,
Թէև փոքրաթիւ, անտէր, անպաշտպան,
Ազնիւ սեպեցին կռուելով մեռնիլ,
Քան ըստրուկ ապրիլ Հայրենի երկրում. . .
Եւ Դիւցազնական ճիգով ու մահով
Յուսահատութեան տեղ՝ ցեղին տրւին
Դիմադրութեան կուռ ուժն անընպառ
Ընդդէմ կատաղած բռնակալութեան.
Կախաղանների կատարից հընչեց
Մահն արհամարհող ձայնն ահաբեկչին,
Զընդանում Հայդուկն իր շղթան փշրեց
Հայ ազատութեան ճիչով դղրդիչ,
Եւ փառքի մի օր Ոճրի ոստանում՝
Մեծ մարդասպանի աչքերին առաջ
Զարդին, Թալանին և ոճիրներին

Հերոս Հայ տղերք զարհուրանք սրփռած՝
Ռումբի հրդեհով պատասխանեցին. . .

Եւ Հայրենիքի վերածընութեան
Կամքը ներշընչած փառքի դարերից
Իր երկաթ ձեռքով կրռեց ու կոփեց
Ապըստամբութեան Ուխտը մարմարէ,
Որ երազանքի Դիցուհու նըման
Աւերակներում ոլորտ գործելով՝
Բովանդակ ցեղի հոգիներին մէջ
Սուրբ ատելութեան հուրբոցը վառեց. . .

Ու հին Տաւրոսի, Պարխարի, Կորդուաց
Հայրական հրսկայ բազուկների հետ,
Ամպրոպի նըման իրանց շանթածին
Դայլածքն ուղղեցին խաւարում գործող
Գող, արիւնկըզակ Դահիճների դէմ՝
Մասիսն ու Նըպատ, Սիեաւն ու Սեպուհ,
Քարքէն ու Գըրգուռ, Խութն ու Տալորիկ,
Անտոքն ու Նեբրովթ, Շուշարն ու Ծաղկէն,
Ու սըրտերից սիրտ, հոգիից հոգի
Կռուի արծւիքը թեւեր թափ տալով՝
Հին յիշատակը Աւարայր դաշտի
Նըման չը հանգած մի հրաբուխի
Կըրկին լեռների ծոցում վառեցին. . .
Եւ թիթեռների երամի նըման
Լոյս ազատութեան սիրով գինովցած՝
Բովանդակ ցեղը եկաւ նետելու
Իր արևները ամենից պայծառ

Վերաբերընկուող խառնարանին մէջ,
Աւերածութեանց վերայ սրբազան
Յառաջդիմութեան մի նոր ատրուշան
Վերականգնելու անձնուէր երդմամբ...

Ու տառապանքի հողը բիւրեղեայ
Վաղորդայնների հունձքովը յղի՝
Վասպուրականից մինչև Երկրորդ-Հայք
Սրբազան ցաւից գալարուեց, դողաց
Վրէժի ահեղ վազքի քայլին տակ։

Եւ մատեան գունդը ըմբոստ Մայր-Երկրի՝
Սեաւի շիկահեր առիւծներն անահ,
Որոնց առնական շըլինքներն հրպարտ
Գերութեան շըղթան երբէք չը ճանչցան,
Ժայռուտ լեռների լանջից անառիկ
Մահահրաւէր մրընչիւններով
Բաշերը ցրցած դէպի թշնամին
Փառքի պայքարի նըշանը տուին...
Ու մաքառումը մոլուցքի թափով
Ամիսներ տևեց սար ու ձորերում...

Հրաշքներից անընդհատ հոսող
Բոցերը հրեղէն ջրվէժի նման,
Եւ խուռն նիզակաց ճօճիւնն ու ճայթիւն
Իրար զարնուող շանթերի հանգոյն.
Ջրահի շառաչ, սուրերի շաչիւն,
Մարտագոռ երգի ժրխորն ահռելի
Ցասկոտ ծովերի փոթորկումին պէս.
Հոգևարների ճիչը դիւային,

Աշտարակների փլուզումն ահեղ,
Հրրկիզեալների վայունն արհաւրոտ,
Դիակի լերանց կոյտերը ճօճուող,
Արեան ցայտումը շէկ բոցերին տակ,
Վառօդի ամպոց թախիծը դրժնէ,
Պայթող ռումբերի ժրպիտը դաժան...
Ողջակիզումին թափօրն ամեհի
Աւերակների վերայ տօնելով
Վրիժածարաւ Մայր-Հողի սրբտում
Ցոյսի արշալոյսն էին հրայրում.
Նոյնպէս քաջազարմ արծուիքն Արցախի
Դէպի Բագրեւանդ, Բարձրը Հայք թըռան,
Լրծընկեց Ցուլերն ու խրոխտ Վարազներ
Դէպի Աղձընիք ու Տուրուբերան
Սրբազան կըռուին առաջնորդելու,
Ուր Դեղին Վագրերն, Յովազներն անահ
Խուլթի կուսական անլոյս անտառից
Հայրենեաց սիրուն օգնութեան հասնող
Սէգ փիղերի հետ ամեհի, վայրագ,
Իրանց կայծակէ կուռ ժանիքներով
Ապառաժները անարգ Եղեռնի
Մոլեգին զարկով փըշըրտում էին...
Նաև հինաւուրց Վասպուրականի
Փանթեռներն հուժկու և անագորոյն
Կորդուց ու Մոկաց աշխարհից եկած
Ընձառիւծների հետ բազուկ բազկի՝
Քուրտի դիակաց տասնեակ բուրգերից
Դէպ Նըւիրական Տաւրոսի շըղթան
Որոտում էին ամպրոպի նման
Յաղթական երգը յեղափոխութեան...

Եւ դեռ Գամիրքից ու Երկրորդ-Հայքից,
Դուգարքից, Նոյնիսկ Փայտակարանից
Գէտայիների խրմբերը արի
Դէպի պայքարի դաշտերն ու կիրճեր
Մոլեռանդօրէն երիվարեցին,
Ծըլող ու ծաղկող իրենց արևով
Արգաւանդելու հողը Հայրենի,
Որ իր վեցդարեան սե՛ւ այրիութեան
Գիշերներից յետ վերջապէս ըզգաց
Կողերից ծընող փըրկութեան Այգի
Հողերն անդրանիկ.
Ու իր աւերակ աչքերը լացին
Մարգարտածաղկունքն անթառամ Ցոյսին...

Սօսեաց անտառում զարթեցան կըրկին
Ծերպերը դարձող արծուի կանչերից
Հին զեփիւռները մեր գուշակաւոր,
Եւ ծիծառների երամին նըման
Նահանգից նահանգ, գաւառից գաւառ
Աւերակները ողջագուրելով՝
Արիւնին վերայ ծաղկող-ծաւալող
Ընկերական Նոր-Կեանքն աւետեցին...
Իսկ եղեմացայտ մեր գետերը հին՝
Արաքսն ու Տիգրիս, Եփրատն ու Ճորոխ
Արածանիի, Մեղրագետի հետ
Սուգի դաշտերում, սարահարթերում
Անկախ Հայրենեաց Նախատօնակի
Ազատ կարկաչը արձագանքելով՝
Իրանց առիւծի բաշերը ճերմակ
Դէպի բըռնութեան սահմանը ցըցած՝

Եղեռնի, Ոճրի մարտկոցներին դէմ
Մըրընչում էին սահանակարկաչ...
Իսկ Ազատութեան Դիցուհին հըպարտ
Զարշարուած հողի վերայ շըրջելով՝
Թիարաններում ու զընդաններում
Հըղթայի զարկուած քաջերին անյոյս
Գերութեան կեանքի վախճանն աւետեց։

—

Բայց աւա՜ղ, Այգը ազա՜տ օրերի,
Որ ծընունդ առաւ հողի խաւերում,
Իր Արշալոյսը չը բըռընկեցրեց
Արիւնաշաղախ Մայր-հողի կըրծքին։
Վարդ չը ծաղկեցաւ այն հողի վերան,
Ուր հայդուկները քաջաբար ընկան...
Միայն յիշատակ թողին պատմութեան
Բաբկէնն ու Պետոն, Գուրգէնն ու Վազգէն,
Սերոբ, Արաբօ, Հըրայր, Արամեան,
Թէ հայն էլ գիտէ մեռնիլ քաջաբար...
Անթիւ են հայի տըւած հերոսներ,
Ամեն մի աւան իր Առիւծն ունի.
Հայ ֆէդայիի գընդակն անվըրէպ
Առած է դարձել քըրդերի միջին,
Նոցա գործերը դեռ մինչև այսօր
Ապրում են նոյնիսկ թըշնամու սըրտում,
Եւ մայրերն իրանց երեխաներին
Օրօր երգելիս գովում են անվերջ
Շէնըկցի Գըրգօն, Ագամն ու Կըրպօն,
Գըրգօի հարսը՝ Շաքէն գահավէժ,
Եւ որի համար խորին հաւատքով
Ասում են ճերմակ մի արծիւ դարձած՝

Անտոքի վերայ ձագն է խընամում,
Որ մեծանալով՝ տէր է դառնալու
Քրդերի բռնած տափաստաններին. . .
Քրդուհին լերանց հովասուն լանջում
Դառն արածելիս կամ ջուր կրելիս
Իր երգերի մէջ հայդուկն է գովում
Նորա գանգրահեր գլուխը սիրուն,
Որ փառքի քընով հանգչում է սարում:
Իսկ ցեղապետներն իրար մօտ գալիս
Երբ յիշում են քաջ Դումանն ու Վարդան
Եւ նոցա մղած մարտն ու արշաւանք,
Միշտ ափսոսում են այն վառ տըղերանց,
Որ գընդակների տարափին ներքև
Անխախտ ժայռերի նման կըուելով
Մինչ վերջին փամփուշտ՝ երգելով ընկան. . .
Իսկ տաճիկ զօրքը դեռ մինչև այսօր
Սարսափ տարածող Սերոբից յետոյ
Քաջ Անդրանիկի ըստուերն է տեսնում
Սասնոյ ամեն մի ժայռի կատարում:

Դար ու դարաւանդ հայրենի հողին,
Լեռներ ու դաշտեր, ձոր ու ծըմակներ
Դահիճ արքայի երդումի դըրժմամբ
Խորին սուգ մընան կըրկնայրու նըման:
Ցաւատանջ մայրը հայ աղբիւրների՝
Արաքսը վըշտոտ, Արաքսը պըղտոր
Անզօր վըրէժի ցաւից կատաղած՝
Ըսկըսեց կըրծել ափերն արիւնոտ
Եւ վիրաւորուած առիւծի լացով՝
Աւերակների միջով սողոսկիլ:

Արիւն էր կաթում գործիչի սըրտից
Տեսնելով ցեղը լուսաւոր դարում
Մի Բորենիի կամքին յանձնուած
Նորա տունն ու տեղ, որը կեանքն ու պատիւ:
Լեզուն էր ծամում անհուն կըսկիծից
Տեսնելով շարքը մահով նօսրացած
Անձնազոհ խըմբին յեղափոխութեան,
Եւ նոցա ճիգը ա՜խ գերմարդկային
Բռնակալութեան փըշով պըսակուած. . .

Ամբողջ երկիրը տըրուած կըրակի
Սոսկալի պատկեր էր ներկայացնում,
Հարուստն ու աղքատ այլևս հաւասար
Երկուսն էլ կարօտ էին չոր հացի:
Պէ՛տք էր ըսպաննել սուլթանն արիւնռուշտ
Սուլթանն աւազակ, սուլթանն ուխտադրուժ.
Նա՛ էր աղբիւրը ամե՛ն չարիքի,
Եւ քանի դեռ նա գլուխն էր երկրի
Հայը մի զոհ էր քըմահաճոյքի:
Սուլթանն ըսպաննել. . . ա՜խ, կա՞ր մի ուղեղ,
Որի մէջ հըպարտ չը թևաբաղխէր
Այդ երազը սէգ, երազը խիզախ,
Նոր-կեանքից առաջ հայը հոգևոր
Այդ կուզէր լըսել, Սուլթանն ըսպաննուած. . .

Պայքարից յոգնած, տըրտում, սըգաւոր
Ռահվիրաները հայ ազատութեան
Իրար մօտ եկած խորհուրդի նըստան՝
Արիւնաթաթախ ցած բըռնակալի
Մահվըճիռը յայտարարելու. . .

Այդ էր պահանջում վրէժը արդար,
Այդ էր աղերսում ազգը տառապող,
Աչքերը փակող արի ֆէտային
Այդ կըտակ թողեց իրա յաջորդին։
Սուլթանն ըսպաննել... ա՜խ, սակայն ի՞նչպէս,
Դա մի երազ էր չիրագործելիք.
Ի՞նչպէս մատենալ այն պարիսպներին,
Որոնց յետևում պաշտպանված էր նա
Զինված պահակով ցորեկ ու գիշեր։
Մարդկային ուժից բայց վեր էր դառնալ
Ահեղ փոթորիկ ռումբերով լեցված,
Շեշտակի վազքով գընալ ու պայթիլ
Դահիճ Սուլթանի պալատի դիմաց.
Կամ դառնալ արծիւ, անգըղ գիշատիչ
Ու պատուհանից ներս խուժել յանկարծ,
Եւ այն ուղեղը, որ ջաքդն յըղացաւ,
Պողպատէ կըտցով ցըրիւ տալ գանկից,
Այլ կերպ դըժւար էր մատենալ նորան...
Այս ծանրը հարցում օգնութեան հասան
Ռազմիկ ընկերներ հեռու աշխարհից,
Որ միաբերան յայտարարեցին
Թէ իրենց թողած երկրում կայ մի լեռ,
Որին Վիտոշա անունն են տալիս,
Որ իր ժայռակուռ գագաթը հրպարտ
Ամպերից վեր է պահում շարունակ,
Լանջերի վերայ մինչդեռ աշխարհի
Ամենամրթին ամպերն են չոքում,
Որոնց ահռելի սև ամպրոպներից
Սատակեցուցիչ շանթեր են ժայթքում։
Այդ այն լեռն է որ բըռնակալ ցեղի

Յարձակումներին կուրծք տըւեց ուժգին
Եւ իր ամպերից թափած շանթերով
Բընաջինջ արեց բանակը տաճկին.
Առաջարկեցին տըղերք ուղարկել
Երթալու Վիտոշ՝ լեռը փըրկութեան՝
Խըլելու համար ամպրոպից շանթեր
Եւ այդ շանթերով գընալ սատկեցնել
Մարդասպա՛ն արքան։

Մըռայլած դէմքերն իսկոյն պարզեցին
Վրէժի յաղեցման հեռանըկարով,
Եւ վետերանը յեղափոխութեան
Իր դիւցազնական անձնըւիրութեամբ
Պահանջեց, որ ինքն երթայ Վիտոշա
Խըլելու շանթը ամպրոպի ծոցից։
Ո՛չ մի աղերսանք իր ընկերներից
Չը կարողացան մըտքից յետ կացնել...
Նա հայրն էր հայի, հայրը ճշմարիտ
Եւ ցեղի վըրէժն էր ապրում իր մէջ.
Ա՜խ, ինքն առանձին այնքան էր տանջւում,
Որքան ողջ ցեղը առած միասին,
Եւ արժանի էր որ կեանքը զոհէր
Մի հըսկայական վեհ ծըրագրի։
Նա ամբողջ կեանքում մի՛շտ ցոյց էր տըւել,
Թէ իր կըրծքի տակ մի սիրտ էր կըրում,
Մի սիրտ, որ բաց էր ամենքի առաջ,
Ով հալածւած էր բըռնակալներից.
Շատ ու շա՜տ դէպքում կըսկիծով լեցված
Նա առաջ նետւեց զինւորի նման
Կեանքը զոհելու պաշտպանած դատին,

Բայց թախանձանքը էր ընկերների
Մի կերպ պահեցին կեանքը թանկագին։
Կեանքն այդ օրւանից ա՜խ նորա համար
Ծանրը բեռ դարձաւ, շըղթայ տանջանքի.
Վըկայ լինելով ամեն օր և ժամ
Հայի դըրական բընաջընջումին,
Քունը մոռացաւ մի՛շտ մըտածելով
Թէ այնքան անլուր ոճիրներից յետ
Հողը կուլ չէր տալ մարդասպան արքան,
Մինչդեռ հայ անմեղ զոհերի համար
Էլ փոս փորելու գետին չը մընաց...
Եթէ յանձն առաւ ցաւով շունչ քաշել,
Նորա համար էր, որ մի օր անձամբ
Դէմ դիմաց կանգնած մարդասպանի հետ,
Եւ ամբողջ ցեղի վըրէժով լեցւած՝
Ռումբով նորանից հաշիւ պահանջի.
Նա ցանկանում էր խընայած կեանքի
Գիշերը գըրկել վեհ վերջալոյսով.
Այդ բոպէն արդէն հասած տեսնելով
Զինակիցներից հըրաժեշտ առած՝
Դէպի Վիտոշա նա թըռաւ գընաց...

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
ԵՐԵՎԱՆ, Мясникяна
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲԱՋԷԻ ԵՐԳԸ

—

Ու այսպէս երգեց ազա՜տ բարձունքում
Վրիժառու Բազէն իր սըլացքին մէջ.
—„Խաղաղութիւն Ձեզ, հայ նահատակներ,
Դուք որ պայքարի ահազանգին հետ
Երբ շեփորեցաւ մահը անողոք
Բրոնակալութեան աշտարակներից
Լուծը թօթափող ըմբոստ հայերին,
Յուսահատութեան, սուգի յարկերից
Դուրս գալով մահուան ճանապարհներում
Անձնուիրութեան թափօր կազմեցիք,
Ու Ձեր արիւնով հողը ներկելով
Ընկաք անտըրտունջ ռազմադաշտերում.
Դուք ուխտեալներդ արդար վըրէժին,
Ուխտաւորներդ անբասիր փառքին,
Մեծ դարբիններդ լոյս խաղաղութեան,
Դուք որ տատասկի դաժան դաշտերում
Հայ հըպարտութեան շուշաններն անբիծ
Առնական բազկով քաղելուց յետոյ՝
Պէս պէս Մահերից ու Զարհուրանքից
Սահմռկած հողին դուք նըւէր բերիք
Առաւօտները ձեր բեղուն կեանքի,
Որպէսզի վայոց բուի փոխարէն

15499-91
15499-91

Ծիծռան հետ թառին հայ երգիչներին
Ոսկի շողերը վառ արշալոյսին...

Խաղաղութիւն Ձեզ, քաջ ֆէտայիներ,
Որ կռուի դիրքում մահամերձ ընկած
Ձեր գիշերացող նայուածքով վագրի
Եղեռնի որդոց հետքը փընտռեցիք,
Ու ձեր սրտերում դեռ չը յագեցած
Սուրբ ատելութեան իժերը ծարաւ
Ձեր մարմարացող կուրծքը ճեղքելով՝
Դէպի թշնամու շարքն ուղղուեցին.
Եւ դեռ ձեր կեանքի վերջին վայրկեանում
Օգնութիւն էիք աղերսում անլուռ
Երեսի վերայ ձեզ դարձընելու
Դէպի թշնամին սողալ կրրնալու՝
Ձեր պատառ պատառ եղած մարմինով
Ա՜խ մի անգամ էլ, և վերջին անգամ
Կրռիւ մղելու մեծ փառքին համար...

Ողջոյն Ձեզ, անբաղդ հայ խըմբապետներ,
Որ ինչպէս անբոյն արծուիք հալածուած
Ընդհարումների ապառաժներից
Նայում էք երկրին և արիւն լալիս,
Ուր կատարեցին ձեր աչքին առաջ
Բարբարոսութեան դաժան ու անլուր
Ձարչարանքն ահեղ, նախճիրներն անգութ,
Եւ դուք ձեր հրպարտ անզօրութեան մէջ
Կարօտցաք մահին, չուզեցիք ապրիլ,
Քանի որ անզօր էիք արգիլել
Բռնակալութեան վազքը ահռելի

Անտէր, տնպաշտպան հայ ցեղի գըլխով...
Բայց յիշատակը ընկած քաջերի
Եւ լուսապայծառ ապագան հայի
Արևշողի պէս ձեր տըրտում սըրտից
Թուլութեան ամպը շուտ փարատեցին.
Եւ դուք երդուեցիք կըրկին ու կըրկին
Կեանքը թանկ ծախել լրկսի թըշնամուն...
Թո՛ղ որ պատնէշին, զըրահապատին
Ձեր սրտերի հետ հոգիներդ անահ
Ու վըրէժխնդիր ձեր կամքն առնական
Անբեկանելի թող պողպատ դառնայ,
Ձեր նայուածքները թող ներոնական,
Դատաստանները դահճորդոց համար
Մինչ խաղաղութիւն թող մովսիսական,
Որպէսզի հողին վերայ կըրկնայրի
Պաշտպան ունենայ վըրէժն հայութեան,
Որպէսզի ձեր տեղ արիւնով ներկուած
Ապառաժները բոլոր չը բառնան,
Որպէսզի լըռէ գերեզմաններից
Բարձրացող ձայնը անմեղ զոհերի,
Եւ սըրբածութեան յաճախանքները
Ձեր փառքի քայլը սուգով չը պատեն...
Եւ որովհետև մայր արևին տակ
Ոճիրն անպատիժ չի կարող մընալ,
Վըստահ եղէք որ վաղ թէ անագան
Բոցեղէն սըրով ապըստամբութեան
Անարգ եղեռնի զաւկըներն անգութ
Դէպի գերեզման դուք պիտի քըշէք...

Ողջոյն ձեզ տանջուած բոյրեր, եղբայրներ,
Որ խ՜որ սուգի մէջ մահն էք հոտոտում՝

Այնքան ահռելի զբրկանքից յետոյ
Էլ չէք ցանկանում ապրել աշխարհում։
Ձեր տունը աւեր, ձեր սիրտը աւեր,
Գերեզմանների վերայ էք քայլում,
Արցունք էք ուզում ձեր վիշտը լալու,
Սարսափից սակայն այդ էլ է ցամքել...
Ձեր ցաւով այրուած, ձեր վշտով խամրած
Քաջասիրտ տղերք գուրս եկան կռուի,
Ձեր կեանքը կրծող վիշապը սուգին
Վառօդի այրող ծխում խեղդելու։
Ուխտի օրերում, փառքի օրերում
Առա՞նց երկիւղի և անդաւաճան
Նոքա կուրծք տուին քրդին ու զօրքին,
Ընկան դիմագրաւ, ձեր սուգը սակայն
Նոցա սրբազան դիակաց վերան
Սև յաղթանակի թափօրը կազմեց...
Բայց միթէ՞ պիտի կրնաք հանդուրժել
Այնքան զբրկանքին ու տառապանքին,
Միթէ՞ յաւիտեան դահիճ արքային
Դուք պիտի մընաք ըստրուկ ու գերի։
Է՛լ բաւ է, ինչքան ձեր մէջ հեկեկաց
Անպաշտպան այրին իր լացովն անվերջ,
Տըղամարդն է որ սորանից յետոյ
Ցաջորդելու է լացող այրիին.
Դա խօսելու է անլա՛ց ու հրպարտ
Կռուից, պայքարից, վրէժից արդար,
Պահանջելու է նա բռնակալից
Հաշիւը անթիւ իր ոճիրների։

Լեռներ, կուռ լեռներ, օրինակ տուէք
Ըստրուկ կեանքի մէջ թուլացած հային,

Թէ ինչպէս գարեր դուք լանջ էք տուել
Փոթորիկներին, շանթերին ահեղ,
Եւ սակայն դարձեալ ամպերի միջում
Անխախտ ու կանգուն ապրում էք տաղտ։
Թող ձեր հաւքերը սիրտ տան խեղճ հային,
Ժայռերն ամրացնեն թոյլի բաղուկներ,
Եւ ձեր ամփոփոխ գիրքն յաւերժական
Հայը մայր-հողին յաւիտեան կապեն։
Եւ դուք մայրենի գետեր տըխրանուշ,
Որ այնքան արիւն-արցունք կուլ տուէք,
Ձեր պըղտոր ալիքն ու ցասկոտ յորձանք
Թող հային ռազմի քայլերգեր հընչեն։
Հեռո՛ւ ձեղանից կըսկիծն ու հառաչ,
Սուրբ կատաղութեամբ ըսպառազինուած
„Վըրէժ“ գոռացէք ձեր որբ ափերում
Դեռ լուռ ծըխացող աւերակներին...
Հովասո՛ն դաշտեր, մարմանդ արօտներ,
Եդեմն երբեմնի, ա՜խ այժըմ խոպան,
Ինչպէս ծիծառներ հայի նոր-գարնան,
Ձեր հովերն այցի ղբրկեցէք թըշուառ
Խըրճիթների մէջ ողբակոծ հային.
Թող պատմեն նորա կարմի՛ր երազում
Թէ անվախճան չէ՛ տառապանքն հայի.
Թէ պայծառ օրեր, թէ ալ վարդ օրեր
Պիտի ողջունեն հողը հայրենի,
Թէ ազատութեան մօրենի պէս
Հայոց լեռներում պիտի բըռընկի
Անշէջ արշալոյսն հայի նոր-կեանքի.
Եւ սուրբ վրէժի յաղուրդից յետոյ
Խաղաղութիւնը պիտի տարածէ

Արդար վաստակի ծիրանին ոսկի
Ցորենի յուռթի դաշտերի վերան։

Իսկ դուք հայրենի սօսեաց անտառներ,
Դուք ինձ չէք տեսնիլ էլ փախըստական՝
Ապաստան գըտած ձեր պուրակներում.
Է՛լ չէք լսելու վըշտի ժամերում
Իմ խո՛ր հառաչանքն ու լացն անարցունք։
Թողնում եմ ընդմիշտ տուն ու հայրենիք,
Հայի դարևոր ցաւից ու սուգից
Հանգիստս ու քունըս խպառ կորցըրած՝
Գընում եմ փընտռել ոճրագործ արքան
Հայի արիւնով դեռ չը կըշտացած։
Կախաղան ելած հերոս հայորդին,
Անշիրիմ թաղուած ֆէդայիք անթիւ,
Թըշնամուց սև հաց մուրացող այրին,
Գերուած աղջըկունք, անարգուած հարսներ,
Անլեզու որբը վաճառքի հանուած,—
Վըրէժ են խընդրում, վըրէժ աղերսում...
Միշտ կուրծք պիտի տալ, պիտի մաքառել,
Քանի արիւն կայ մեր երակներում,
Քանի բազուկը կարող է շարժել,
Ուժը պիտի նետել թըշնամու ճակտին.
Թէ զէնքը խըլեն, փայտով ու քարով
Պիտի մաքառել, թէ այդ էլ խըլեն,
Բըռունցքով պիտի զարնել թըշնամուն,
Իսկ թէ բազուկն էլ կըտրէ թըշնամին,
Ցուլի պէս գըլխով պիտի պաշտպանուել.
Թէ վիճակուած է ամբողջ հայ ազգին
Բնաջինջ լինել հայրենի երկրում,

Թո՛ղ գոնէ մեռնենք մինչև վերջին մարդ
Անսիրտ թըշնամուն դիմադըրելով,
Որպէսզի տըրտում սև բուերի տեղ
Հայ ազգի մահը արծուիքը ողբան.
Եւ արևատապ անապատներում
Առիւծն ու վագրը ժայռերի ծերպից
Առնական ազգի թաղումը սըգան...
Դէհ, մընաք բարև, թող այսուհետև
Ամե՛ն հայ մահւան գագաթից քայլէ,
Մինչև որ ծագէ մեր երկրին արև
Եւ հայ արեան մէջ ծիածան կապէ“։

Այսպէս վերջացրեց իր երգը բաղէն,
Եւ նայուածքը շեշտ, մարգարէական
Ղեսեց սարերին հայոց ձիւնապատ
Ու խո՛ր հառաչեց ներկան յիշելով.
Քաղաքներն աւեր, գիւղերն անբընակ,
Դաշտերի ծաղկունք արեամբ բորբոսնած.
Երգ ու պարի տեղ սահմանից սահման
Հալածուող հայի հեծկըլտանքի հետ
Լըսւում է դահճի բըրքիջն անվախճան...

Բայց յուսահատիլ նա չէր իմանում.
Եւ ամեն անգամ աղէտի պահին
Ներշընչել էր նա միշտ եռանդ ու գործ
Մաքառումներից յուսահատ գործչին.
Հաւատում էր նա մոլեռանդօրէն
Հայի ապագայ աղատ օրերին...
Եւ արգելքը գոռ, ամպը սևաթոյր,
Որ ուշացնում էր Արշալոյսն հայի,

Համարում էր նա աբքան մարդասպան,
Իր խորթաֆանց հոգու խորքերից
Հաւատում էր միշտ ժողովուրդների
Եղբայրակցութեան բընազդին հըզօր,
Եւ գիտէր որ լոկ աբքաներն էին
Ոճրագործութեան որոմը ցանող
Այլազան ցեղի ժողովուրդների
Եղբայրակցութեան հունձքի դաշտերում...

Եւ յանկարծ խըրոխտ դէպ հեռուն նայեց
Այն կողմ, ուր դահիճ Սուլթանն արիւնոտ
Պարըսպապաշտպան պալատի խորքում
Իր ոսկըրացած ձեռքը ճակատին
Հայ ազգի ջընջման խորհուրդն է խորհում...
Եւ լեցւած ցեղի դառն ատելութեամբ
Ոռազմի զիլ քըրքիչն արձակեց օդում՝
Վաղը յիշելով, երբ շանթով զինւած
Ինքը կանգնած է Դահճի յանդիման,
Հըպարտ խոյանքով նորան ժոտենում
Եւ հարւածներով շանթեղէն ռումբի
Իր ոտքերի տակ դիակը փըռում.
Ու յետոյ ինքը կախաղան ելած
Հայ ազատութեան ճիչը շըրթներին՝
Հըպարտ ժըպիտով մեռնում անտըրտունջ
Շիջող նայւածքը Հայ երկրին գամած...
Եւ ազա՜ տ օրեան երազով հարբած
Մոռացած ցաւն ու տառապանքն արդի՝
Սըլացաւ արագ դէպի Վիտոշա,
Ազատ դարբնոցը ահեղ շանթերի։

ՎԻՏՕՇ

—

Թերրի դաշտերում, վառ արօտներում
Կանգնած է հըպարտ ժայռուտ Վիտօշան,
Ազատ ծերպերում արձիքն են թառում,
Վիրաւոր բազէն, անգղը ծերացած
Նորա ձորերն են գերեզման ընտրում։
Հոծ կարաւանը սև սև ամպերի
Նորա լանջերում հանգիստ է առնում,
Մինչդեռ արևը կոյս պայծառութեամբ
Շողում է յաւերժ նորա կատարում։
Մութ փապարներում և քարայրներում
Օձերն են սողում լըռին շարքերով,
Վարազն ու յովալ պահւած կիրճերում
Որսն են պատառում սուր ժանիքներով։
Դարերով կանգուն ժայռերն անսասան
Շանթերից այրւած կուրծքերը ցըցած
Անձնատուր եղած անվերջ երազին
Դիտում հայրական գորովի ժըպտով
Հեզ այծեամների երամին սիրուն,
Որ առաւօտից մինչ արևամուտ
Ժայռերից ժայռ են ուրախ ցատկըտում։
Եւ աղբիւրներն ու ջըրվէժներն հուժկու
Մանկական երգը զիլ հընչեցնելով
Շանթատապ կըրծքից հըսկայ ժայռերի

Դէպի դաշտերն են գահավէժ վազում.
Իսկ դալարապատ փեշերի վերայ
Յաւիտենական մարմարի փոխուած
Իր փառքի քընում երազում անվերջ
Շունչին տակ մեծցած անյաղթ Լեվըսկին,
Որ իր մայրական խընամքին ներքև
Ռազմի պատգամը քարացած ճակտին
Կազմ ըսպասում է ահաւոր ժամին,
Երբ նենգ թըշնամին փորձէ յետ խըլել
Ազատութիւնը հըպարտ Վիտոշին։
Ասում են թէ երբ ամպերն են գոռում
Հանթերը ուժգին ժայռերին բաղխում,
Քարէ աչքերը քաջ Առիւծորդուն
Ջահերի նըման լոյս են արձակում...
Եւ ամեն տարի շըքեղ հանդէսով
Իր կախաղանի փառահեղ մահւան
Ցոնն է կատարում ժողովուրդն ազատ.
Հերարձակ աղջկունք ծաղիկ են ցանում
Հայրենիքի Մեծ որդու արձանին,
Երիտասարդներ երդումը կըրկնում
Կեանքերը զոհել հայրենեաց շահին,
Հարսները գաղտնի սարսուռով լեցուած
Արձանի առաջ երկիւղածութեամբ
Զոքած աղօթք են մրրմընջում լըռին՝
Առիւծորդիներ ծընելու համար։
Իսկ ծերունիներն արցունքն աչքերին
Համբոյրով ծածկում ճակատը քաջին,
Որ ազատութիւն տըւեց Բուլգարին։
Ա՜խ դեռ նոցա մէջ թարմ են այն օրեր,
Երբ ըստրուկ էին մեզ նըման Թուրքին,

Նոյնն էին քաշում, ինչ մենք ենք քաշում,
Նոյն սուգն ու արիւն, նոյն ցաւն ու կըսկիծ.
Նոցա երկիրն էլ անապատ դարձած
Արեան սաւանն էր առած իր կըրծքին,
Նոցա երկրումն էլ ցաւի լացի հետ
Լըսւում էր միայն շըղթայի շառաչ...
Բայց Առիւծորդին իր ընկերներով
Ծանր ու արիւնոտ պայքարներից յետ
Իր կախաղանի յիսուսեան մահով
Հայրենեաց համար ազա՜տ կեանք գընեց։
Եւ այն օրւանից դաշտերը նորից
Գոյնըզգոյն ծաղկունք ծոցից հանեցին,
Վըտարուած թըռչունք նորից յետ եկան,
Հինգկանի ժիր երգը կեանք առաւ։
Աւերակները վերաշինուեցան,
Անբընակ վայրեր նորից լեցուեցան.
Աշխատանքի հետ վառ երգն ու ծիծաղ
Յաջորդեց լացին, սուգին, շըղթային,
Եւ ողջ երկիրը յարութիւն առած
Ըսկըսեց ծաղկիլ վարդի պէս գարնան։

Ինչպէս մի հըսկայ դագաղ անբարբառ
Վիտոշն է նիրհում խաւարում թաղուած.
Աստղերի բոյլը երկընքի խորքից
Հըսկում են ինչպէս հուր աչքեր անլաց...
Միայն լըսւում է մերթ ընդ մերթ ընդհատ
Սոյլը օձերի, թռիչքն արծիւի,
Ցովազի ճիչը ձորերի միջից
Կամ ժայռն ըշտապող վազքը այծեամի
Անթափանցելի մացառուտներից։

Իսկ ՀԸՐՎԷԺՆԵՐԸ մեղմագին բայլով
Յաւիտենական երգը կրկնելով
Օրօր են ասում ժայռուտ հրսկային...
Լուսինը յոգնած մերթ կանգ է առնում
Նորա երկնամբարձ ժայռերի ծայրին
Եւ հանգիստն առած լուռ շարունակում
Յաւիտենական ուղին երկնային..
Վեհ է ամեն ինչ սարսուռ է ազդում
Վիտոշի տեսքը գիշերուայ պահին.
Հրպարտ ժայռերը շանթերից սեցած
Կարծես բարացած օրհներգներ լինին
Ապրստամբութեան նահատակների
Անմոռանալի անունին ձօնուած...

Կէս գիշերն անց էր, երբ ձագուկին հետ
Հայ բազէն յոգնած հասաւ Վիտոշա,
Համբուրեց հողը և հանգիստ առաւ
Առիւծորգիի արձանին առաջ:
Այդտեղ նա պիտի ըսպասէր ժամին,
Երբ փոթորիկը աշխարհասասան
Շանթեր կը շընչէր լերան կատարին...
Բիւրաւոր մրտքեր, անթիւ պատկերներ
Իրար յետևից եկան ու անցան.
Արի ձագուկը կրծքին պինդ սեղմած
Մինչև փոթորիկ քուն դրրեց նորան,
Ինքը երազին մինչդեռ անձնատուր
Հայ հողն յիշելով խորունկ հառաչեց...
Արդեօք ինք պիտի կրնա՞ր յաջողել
Շանթ խրլել ահեղ ամպրոպի ծոցից,
Ու պիտի կրնա՞ր թրռչել անարգել

Մայրաքաղաքը ոճրագործութեան...
Պիտի յաջողի՞ր դէմ դիմաց կանգնել
Մարգասպանների գրլուխ արքային
Եւ իր կայծակի շեշտակի զարկով
Սատակը փրռել ոտքերի տակին...
Եւ ակամայից մի վայրկեան տրխրեց.
Մահուան միտքը չէր տրխրութեան պատճառ,
Անարգում էր նա մահն ու վախ մահուան.
Անյաջողութեան կասկածն էր միայն,
Որ պարզ ճակատը կընճիռով ծածկեց,
Եւ արի բազէն, որ կեանքում երբէք
Արցունք չէ՛ր թափել, արտասուեց այդտեղ,
Եւ արտասուքի այրող շիթերից
Ձագուկը խորունկ քընից ըսթափուեց,
Որ համբուրելով աչքերը թրրջած
Պատմեց երազը հօր գրրկում տեսած.
—„Մենք կանգնած էինք շանթերով զինուած
Թուրք ազօթատան հրրապարակում,
Ուր դահիճ արքան արիւնոտ ձեռքով
Աղօթք էր անում իրանց Աստրծուն:
Յանկարծ դուրս եկաւ. պահակներն արթուն
Շրրջապատեցին զինուց անտառով,
Դու ինձ հետդ առած սրրացար թափով
Եւ ահեղ ճիչով նրշանը տրւիր
Շանթի տարափը թափելու վերան...
Զօրք, իշխան, կառք, ձի, ցա՛ծ սուլթանի հետ
Մի ակընթարթում երկնակամարում
Հողմերից քրշուող ցընցոտու նրման
Տարուբերուեցին և կրտոր կրտոր

Փըլած մըզկիթի քարերի վերան
Արիւնաշաղախ խառնիխուռն ընկան“...

Իսպառ փարատեց անյաջողութեան
Կասկածը մաշող բազէի սըրտից,
Հըպարտ ձագուկին հմբուրած ուժգին
Որոշեց ելլել բարձունքը լեռան,
Այնտեղ ըսպասել շանթոտ փոթորկին։
Եւ մինչդեռ նոքա հըրաժեշտ տըւած
Զինակցի անմահ լուռ յիշատակին,
Դէպի Վիտոշի բարձունքը թըռան,
Ուր խուռն հողմերը մութ ծորձորներում
Մըրրըկահաւի կանչից արթընցած
Իրենց ժայռերէն անկողիններից
Թըռչող օձերի վոհմակի նըման
Դէպի ամպերը ուղևորուեցան...
Հողմերի վազքից ցընցուեց Վիտոշան
Դագաղից յառնող հսկայի նըման,
Արծուիք ճըչացին իրանց բոյներում,
Սարսափած այծեամն գահավէժ եղաւ.
Ցովաղն ու Վարազ վախից բըռնըւած
Քարայրի անլոյս խորքում պահուեցան...
Հասան սեւաթոյր ամպերն հողմավար
Հեւիհեւ երկրի չորս հորիզոնից
Եւ մահ տարածող բանակի նըման
Ժայռերի շուրջը տեղաւորուեցան։
Եւ վայրկենաբար մըռայլ ծոցերում
Լուսաթոյր հրդեհ վառեցին ահեղ,
Որին յաջորդեց մըռունչն ամեհի
Վիշապախըռիւ մութ ամպրոպների...

Ամպերը խանձուող, ժայռը գահավէժ,
Շանթահար վայող սողունն ու գազան
Ուժն էին պատմում, ուժը վըկայում
Մռայլ Վիտոշի անվըրէպ շանթին...
Բազէն ձագուկով մի ժայռում թառած
Խոր տըպաւորուած շանթերի զարկով
Ցիշում էր զոհը—մարդասպան արքան
Ժայռի պէս ընկած իր հարւածի տակ,
Եւ պատրաստւում էր դէպ շանթեր թըռչել,
Երբ ձագն անհամբեր գերագոյն ճիգով
Թըռաւ ամպրոպը և կախուած մընաց
Շանթերի անշէջ կըրակէ ցանցում...
Առանց յապաղման Բազէն ճըչալով
Դէպի ձագուկը նետի պէս թըռաւ,
Հասաւ ու գըրկեց. երկուսով մէկտեղ
Այրուեցին իսկոյն շանթերի բոցում...
. . . . . .
Վիտոշն այդ տեսաւ և ժայռոտ բերնից
Կըսկիծի ճիչը արձակեց ուժգին,
Հողմերը լալով դէպ Մասիս թըռան
Գուժելու մահը իր մեծ Զաւակին։
Շանթերը մարան, ամպերը կորան,
Աստղերը որպէս մահուան կերոններ
Թախծոտ շողացին Վիտոշի վերան...
Արծուիքը սուգի թափօր կազմեցին
Գովելով մահը անահ Բազէին,
Եւ Գայլն ու Վարազ մինչև առաւօտ
Ցաւի վայիւնով ձորերում լացին...

—

Առաւօտեան դէմ սև լուրը գուժկան
Բալկանի հրսկայ սարերը ցընցեց,
Ու ամեն կողմից ուխտի պէս եկան
Զինակիցները Բաղէի թաղման։
Բայց անմահ Բաղէն իր ձագուկի հետ
Նոքա չը գտան և ոչ՝ մի վայրում...
Առասպել թէ զըրոյց, մի լուր տարածուեց,
Թէ ողջ է Բաղէն ձագով միասին,
Թէ նոքա շանթեր խըլած ամպրոպից
Զորերն են իջել հանգիստ առնելու,
Ուր երկու ճերմակ կատաղի Ցովազ
Հրսկում են որպէս պաշտպաններ արի,
Մինչև որ պատգամ գայ հին Մասիսից,
Թէ հայ ցեղն ամբողջ կեցել է ոտքի.
Այդ ժամին նոքա վեր պիտի կենան,
Ցովազների հետ պիտի արշաւեն
Դէպի ապրստամբ երկիրն հայրենի։

Մինչև որ կը գայ Մասիսից պատգամ
Եւ կ'աւետէ ժամն ապրստամբութեան,
Բաղէն ձագուկով, ամեն մի անգամ
Երբ սև ամպեր են ծածկում Վիտոշան
Եւ ամպրոպները գոռում մըռընչում,
Ամպերի վերայ նըստած անսասան
Պաշարի համար շանթեր է խլում...

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅ ՐԻՑԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Գր. ն.
1.	**Ապաստարական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)	.05
3.	**Դարձնի տպարան** (սպառ.)	.05
4.	**Դիտական սոցիալիզմ.** Ֆ. ԷՆԳԵԼՍ (սպառ.)	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր.** (Դ. տպագր.)	—
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը.** (սպառ.)	.20
7.	**Կարճոյ յիշատակին** (*Զորս ծուռուած*) „	.50
8.	**Հ. Յ. Դ. երկրորդ բնդհ. ժողովի ասենագրութիւնք**	—
9.	**Գերիներ,** Homo homini lupus, ՎԱՐԴԳԷՍ (սպառ.)	.20
10.	**Յերիտասարդներին.** Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ. (սպառ.)	.20
11.	**Ազատութեան նահապարեին.** ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)	.30
12.	„ „ „ Բ. „	.60
13.	**Սարոյանցին տրամաբանութիւն.** ԷԼԼԷՆԻ. (սպառ.)	.50
14.	**Ազատութեան նահապարեին.** ՂԱՐԻԲ. Գ. „	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Սովկասեան վէրքեր.** Է. ԱԿՆՈՒՆԻ.	3.00
17.	**Հայրենիքի գաղափարը.** Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ (սպառ.)	1.00
18.	**Սազմակերպական կանոններ.**	—
19.	**Դէպի կռիւ.** Է. ԱԿՆՈՒՆԻ. (Գոյկան՝ 1 ռուբլի, Ամերիկա՝ 1/2 դոլար).	2.00
20.	**Յեղափոխականներ.** Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ (սպառ.)	.20
21.	**Դոխազին Սովկասեան գործունէութեան.** (Բ. տպ.)	—
22.	Подвиги царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դաշն.**	.20
25.	**Հ. Յ. Դ. երրորդ բնդհ. ժողովի ասենագրութիւնք.**	—
26.	**Նոր Մահմէտականներին** (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase** E. AKNOUNI	2.00
28.	**Ազատութեան նահապարեին.** ՂԱՐԻԲ. Դ. գրոյկ.	.40
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատաւարութիւն)	.50
30.	**Վիրաւորի բազկին.** ՎՏԱՐԱՆԴԻ.	.50
31.	**Յեղափոխականի մտքերը.** ՔՊ. ՄԵՐԱՅԼԵԱՆԻ (Մամուլի տակ)	—

Դիմել՝ «Դրօշակ»ի խմբագրութեան, Ժընեվ։

«Ազգային գրադարան»
NL0356602

48735